Բնակելի անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման վարկեր

Ձեր երազանքի տունն այսքան մոտ HSBC հիփոթեքային վարկի օգնությամբ

Տեղեկատվական ամփոփագիր ֆիզիկական անձանց համար
Հրապարակման ամսաթիվ՝ հոկտեմբեր, 2020թ.
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:
Գործող պայմաններին ծանոթանալու, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով այցելեք մեր ինտերնետային կայքը՝www.hsbc.am, ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարեք +374 60 655 000 հեռախոսահամարով:

HSBC

Բնակելի անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման վարկեր

Բանկը մինչև կրեդիտավորման պայմանագրի կնքումը՝ առնվազն յոթ օր առաջ, կրեդիտավորման պայմանագիր կնքելու առաջարկը և կրեդիտավորման պայմանագրի նախագիծը տրամադրում է Հաճախորդին: Հաճախորդը կարող է կրեդիտավորման պայմանագիր կնքելու առաջարկը ընդունել աշխատանքային յոթնօրյա ժամկետում /մտածելու ժամանակ/ այն ստորագրելու և առձեռն Բանկին վերադարձնելու միջոցով:

Վարկի նպատակը

Բնակելի անշարժ գույքի ձեռքբերում և/կամ վերանորոգում

Վարկի արժույթ

ՀՀ դրամ
ԱՄՆ դոլար

Վարկի տոկոսադրույք[1]

Անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման վարկերը տրամադրվում են լողացող անվանական տոկոսադրույքով: Լողացող անվանական տոկոսադրույքը հաշվարկվում է պահանջվող վարկի արժույթի համար Բանկի կողմից սահմանված մանրածախ հաշվարկային տոկոսադրույքին գումարած տվյալ վարկատեսակի համար սահմանված հաստատուն մարժա:

Անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման վարկեր	Տարեկան անվանական տոկոսադրույք	Տարեկան փաստացի տոկոսադրույք
ՀՀ դրամով	9% + 3% = 12% Որտեղ՝ 9% - Բանկի ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է 3% - հաստատուն մարժան ՀՀ դրամով ձեռքբերման և վերանորոգման վարկերի համար	Անշարժ գույքի ձեռքբերում՝ 13.03-15.94% Անշարժ գույքի վերանորոգում՝ 13.13-16.82%
	Plus և Status հաճախորդների համար գործում է արտոնյալ՝ 11% տարեկան անվանական տոկոսադրույք՝ Որտեղ՝ 9% - Բանկի ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է 2% - հաստատուն մարժան ՀՀ դրամով ձեռքբերման և վերանորոգման վարկերի համար	Անշարժ գույքի ձեռքբերում՝ 11.88-14.10% Անշարժ գույքի վերանորոգում՝ 12.01-15.01%
ԱՄՆ դոլարով	3.3% + 5.7%= 9% Որտեղ՝ 3.3% - Բանկի ԱՄՆ դոլարով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է 5.7% - հաստատուն մարժան ԱՄՆ դոլարով ձեռքբերման և վերանորոգման վարկերի համար	Անշարժ գույքի ձեռքբերում՝ 9.70-12.55% Անշարժ գույքի վերանորոգում՝ 9.82-13.43%
	Plus և Status հաճախորդների համար գործում է արտոնյալ՝ 8% տարեկան անվանական տոկոսադրույք՝ Որտեղ՝ 3.3% - Բանկի ԱՄՆ դոլարով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է 4.7% - հաստատուն մարժան ԱՄՆ դոլարով ձեռքբերման և վերանորոգման վարկերի համար	Անշարժ գույքի ձեռքբերում՝ 8.61-10.82% Անշարժ գույքի վերանորոգում՝ 8.74-11.68%

[1] *Կախված վարկի ռիսկայնության գնահատումից՝ վարկի դիմումը կարող է հաստատվել ավելի բարձր տոկոսադրույքով:*

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը ձեզ համար տոկոսագումարները և վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅՑԵԼԵՔ ԲԱՆԿԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔ www.hsbc.am:

Լողացող անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել վարկի գործողության ընթացքում, սակայն ոչ ավել, քան տարին երկու անգամ: Նախատեսված առավելագույն և նվազագույն շեմը սահմանվում է վարկի անվանական տոկոսադրույքի նկատմամբ, որը չի կարող գերազանցվել վարկի գործողության ամբողջ ընթացքում: Լողացող անվանական տոկոսադրույքը չի կարող բարձրանալ կամ իջնել ավելի քան 7 տոկոսային կետով վարկի գործողության ամբողջ ընթացքում: Սույն պայմանը առկա է յուրաքանչյուր վարկային պայմանագրում:

Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել, եթե Բանկը վերանայի իր մանրածախ հաշվարկային տոկոսադրույքը (ՄՀՏ): Տոկոսադրույքի փոփոխությունը կախված է միայն ՄՀՏ-ի փոփոխությունից:

- ՄՀՏ հաշվարկման և հետագա փոփոխման հիմքում ընկած են Բանկի կողմից սահմանված հիմնական և երկրորդային ցուցանիշները:

- ՄՀՏ-ն, առաջին հերթին, սահմանվում է՝ հիմք ընդունելով հիմնական ցուցանիշը և սահմանման օրվա դրությամբ հավասար է հիմնական ցուցանիշի արժեքին: ՄՀՏ-ն ենթակա է վերանայման տարեկան երկու անգամ:

- ՄՀՏ-ն ենթակա է փոփոխման, երբ վերանայման օրվա դրությամբ գործող ՄՀՏ-ի և հաշվարկված ցուցանիշի տարբերությունը բացարձակ արժեքով կազմում է 0.5 տոկոսային կետ կամ ավել: Այս պարագայում ՄՀՏ-ը հավասարվում է ցուցանիշի նոր արժեքին: Հակառակ դեպքում, այն մնում է անփոփոխ:

- Բանկի գործող մանրածախ հաշվարկային տոկոսադրույքի մասին տեղեկանալու համար այցելեք մեր ինտերնետային կայքը՝ www.hsbc.am, ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարեք +347 60 655 000 հեռախոսահամարով:

- ՄՀՏ-ի փոփոխության/ճշգրտման դեպքում Բանկը պարտավորվում է Հաճախորդին տեղեկացնել փոփոխությունն ուժի մեջ մտնելուց առնվազն մեկ ամիս առաջ՝ հաճախորդներին ուղարկելով անհատական ծանուցումներ:

- Տոկոսադրույքի աճի դեպքում մինչև փոփոխված տոկոսադրույքի ուժի մեջ մտնելու պահը Հաճախորդն իրավունք ունի ամբողջապես մարելու վարկն առանց որևէ տույժի կամ տուգանքի կիրառման, եթե այդպիսիք առկա են վարկային պայմանագրով:

Վարկի համար գանձվող պարտադիր վճարներ

Վարկի տրամադրման հետ կապված պարտադիր վճարներն են՝ վարկի տրամադրման միանվագ վճար, գրավի իրավունքի պետական գրանցման միանվագ պետական տուրք և վճար, նոտարական ծառայության միանվագ վճար, Պետ. Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրվող գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկանքի միանվագ վճար, գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման միանվագ վճար, անշարժ գույքի ապահովագրության տարեկան վճար և գույքի գնահատման վճար*: Վարկի տրամադրման հետ կապված պարտադիր վճարները ենթակա են վճարման վարկառուի կողմից: Դրանց չափերը ներկայացված են սույն տեղեկատվական ամփոփագրի Հավելված 1-ում:

** Վերանորոգման վարկերի համար, վարկի գումարի տրամադրումից հետո 6 ամսվա ընթացքում պետք է ներկայացվի կատարված վերանորոգման մասին Բանկի կողմից ընդունելի անկախ գնահատող կազմակերպության եզրակացությունը:*

Պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր բացասական հետևանքների մասին տեղեկատվություն

- ՎԱՐԿԻ ԿԱՄ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՈՒՇԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՎՐԱ ԿԿԻՐԱՌՎԻ ՏՈՒԺՄՆՔ՝ 5% ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ԳՈՒՄԱՐԱԾ ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ:

- ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՅԴ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ ԵՎ ԱՔՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՖՈՐՄԻՆԳ ՓԲԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԱՆՑ ԴԱՌՆԱԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ: ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԻՐԱՌԵԼԻ Է ՆԱԵՎ ՀԱՄԱՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ և ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ:
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՋ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

- ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ, ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒՆ ԿԱՐՈՂ Է ԶՐԿՎԵԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ:

- ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ, ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԿԱՄ ՎՃԱՐՈՒՄԸ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՌԱՆՑ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԲՈՆԱԳԱՆՁԵԼ ԵՎ ԻՐԱՑՆԵԼ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒՂՂԵԼ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՄԱՆԸ:

- ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՐՎԵԼ ՎԱՐԿԱՌՈՒԻ/ՀԱՄԱՎԱՐԿԱՌՈՒԻ/ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ՝ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ:

Վարկի վաղաժամկետ մարում

Հաճախորդն իրավունք ունի վաղաժամկետ մարել վարկը՝ Բանկին նախապես տեղեկացնելով այդ մասին: Վարկի հիմնական գումարի վաղաժամկետ մարում կատարելու դեպքում Բանկը կարող է կիրառել տուգանք՝

ա) վարկի վաղաժամկետ մարված գումարի առավելագույնը 0.6 տոկոսի չափով, եթե վաղաժամկետ մարումը տեղի է ունենում կրեդիտավորման պայմանագրի գործողության առաջին տարվա ընթացքում

բ) վարկի վաղաժամկետ մարված գումարի առավելագույնը 0.4 տոկոսի չափով, եթե վաղաժամկետ մարումը տեղի է ունենում կրեդիտավորման պայմանագրի գործողության երկրորդ տարվա ընթացքում

գ) վարկի վաղաժամկետ մարված գումարի առավելագույնը 0.2 տոկոսի չափով, եթե վաղաժամկետ մարումը տեղի է ունենում կրեդիտավորման պայմանագրի գործողության երրորդ տարվա ընթացքում:

Վարկառուն պայմանագրային տարվա որևէ պահի կարող է վաղաժամկետ մարել այդ պայմանագրային տարվա համար մարման ժամանակացույցի համաձայն մարման ենթակա վարկի մայր գումարը առանց տուգանքի: Պայմանագրային տարի է համարվում կրեդիտավորման պայմանագրի կնքման ամսաթվին հաջորդող յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածը:

Վարկի վաղաժամկետ մարում կատարելու դեպքում Բանկի կողմից համամասնորեն նվազեցվում է վարկավորման ընդհանուր ծախսը, այդ թվում՝ վարկի տրամադրման վճարը: Այն վճարները, որոնք Հաճախորդի կողմից վճարվել/վճարվում են այլ օժանդակ ծառայությունների համար, ներառյալ, բայց չսահմանափակվելով ապահովագրական ընկերությանը, գնահատող կազմակերպությանը, նոտարական գրասենյակին, գրավի իրավունքը գրանցող մարմնին կատարված վճարներով, կրեդիտավորման ընդհանուր ծախսից նվազեցման ենթակա չեն:

Պայմաններ

Նվազագույն պայմաններ

Դուք կարող եք դիմել բնակելի անշարժ գույքի ձեռքբերման կամ վերանորոգման վարկ ստանալու համար, եթե բավարարված են հետևյալ պահանջները՝

Աշխատավարձային հաշվի առկայության դեպքում

- Դուք ՀՀ քաղաքացի եք կամ հանդիսանում եք ՀՀ ռեզիդենտ[1],

և

ունեք բանկային հաշիվ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Բանկ), առնվազն 3 ամիս աշխատում եք Ձեր ներկայիս գործատուի մոտ, և Ձեր ամսական զուտ աշխատավարձը կազմում է նվազագույնը 200 000 ՀՀ դրամ (կամ 500 ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում): Ընդ որում, Ձեր աշխատավարձը պետք է փոխանցվի Բանկում սպասարկվող Ձեր հաշվին վարկի տրամադրումից հետո (եթե աշխատավարձի փոխանցումը չի պահանջվում Բանկի կողմից մինչև վարկի տրամադրումը[2]),

կամ

ունեք բանկային հաշիվ որևէ այլ բանկում, անընդմեջ աշխատում եք առնվազն 3 ամիս և Ձեր աշխատավարձը վերջին 3 ամսվա ընթացքում փոխանցվել է Ձեր հաշվին, և Ձեր ամսական զուտ աշխատավարձը կազմում է նվազագույնը 250 000 ՀՀ դրամ (կամ 600 ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում):

Ոչ աշխատավարձային հաշվի առկայության դեպքում

- Դուք ՀՀ քաղաքացի եք կամ հանդիսանում եք ՀՀ ռեզիդենտ[1],

և

ունեք առնվազն 3 ամսվա բանկային պատշաճ պատմություն Բանկում, և Ձեր հաշիվների վերջին 3 ամիսների միջին ամսական մնացորդը, ինչպես նաև վերջին ամսվա միջին մնացորդը կազմում է նվազագույնը 200 000 ՀՀ դրամ (կամ 500 ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում),

կամ

ունեք առնվազն 3 ամսվա բանկային պատշաճ պատմություն ՀՀ տարածքում գործող որևէ այլ բանկում, և Ձեր հաշիվների վերջին 3 ամիսների միջին ամսական մնացորդը, ինչպես նաև վերջին ամսվա միջին մնացորդը կազմում է նվազագույնը 250 000 ՀՀ դրամ (կամ 600 ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում):

1 Սույն վարկային ծառայության համար ՀՀ ռեզիդենտ են համարվում այն անձինք, ովքեր առնվազն մեկ տարի բնակվում են ՀՀ-ում հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:
2 Այդ նպատակով անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք գործատուից, ըստ որի վերջինս պարտավորվում է փոխանցել Ձեր աշխատավարձը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում սպասարկվող Ձեր բանկային հաշվին: Աշխատավարձը Բանկում սպասարկվող հաշվին փոխանցելու հետ կապված մանրամասներին կծանոթանաք վարկի հաստատման գործընթացի ժամանակ:

ՀՀ դրամով վարկեր

	Ձեռքբերման վարկ	Վերանորոգման վարկ
Գումար	5 - 200 միլիոն ՀՀ դրամ	3 - 35 միլիոն ՀՀ դրամ
Ժամկետ[1]	24 - 240 ամիս	24 - 120 ամիս
Վարկ-եկամուտ հարաբերակցություն	Վարկառուի բոլոր վարկերի գծով ամսական վճարումների հարաբերակցությունը զուտ ամսական եկամտին չի կարող գերազանցել 60%-ը, եթե զուտ ամսական եկամուտը 700 000 ՀՀ դրամից քիչ է, և՝ 70%-ը, եթե զուտ ամսական եկամուտը 700 000 ՀՀ դրամ է և ավելի	
Վարկ-գրավ հարաբերակցություն	Վարկի գումարը չի կարող գերազանցել՝ ◆ ձեռքբերվող գույքի գնահատված արժեքի 90%-ը, եթե այն գտնվում է Երևանում կամ մերձակա շրջաններում[2], ըստ այդմ Ձեր կանխավճարի գումարը պետք է կազմի գույքի գնահատված արժեքի նվազագույնը 10%-ը ◆ ձեռքբերվող գույքի գնահատված արժեքի 90%-ը, եթե այն գտնվում է Երևանում և գրավադրվում է ՀՀ-ում գտնվող լրացուցիչ անշարժ գույք, պայմանով, որ ձեռքբերվող և լրացուցիչ գույքերի վարկ-գրավ հարաբերակցությունը միասին չի գերազանցում 75%-ը: Որպես լրացուցիչ գրավ Բանկը ընդունում է միայն մեկ գույք[3], ըստ այդմ Ձեր կանխավճարի գումարը պետք է կազմի գույքի գնահատված արժեքի նվազագույնը 10%-ը ◆ ձեռքբերվող գույքի գնահատված արժեքի 75%-ը, եթե այն գտնվում է Երևանում, և լրացուցիչ գույք չի գրավադրվում, ըստ այդմ Ձեր կանխավճարի գումարը պետք է կազմի գույքի գնահատված արժեքի նվազագույնը 25%-ը ◆ ձեռքբերվող գույքի գնահատված արժեքի 60%-ը, եթե այն գտնվում է ՀՀ-ի որևէ այլ վայրում, և գրավադրվում է ՀՀ-ում գտնվող լրացուցիչ անշարժ գույք, ըստ այդմ Ձեր կանխավճարի գումարը պետք է կազմի գույքի գնահատված արժեքի նվազագույնը 40%-ը ◆ ձեռքբերվող գույքի գնահատված արժեքի 30%-ը, եթե այն գտնվում է ՀՀ-ի որևէ այլ վայրում, և որևէ լրացուցիչ գույք չի գրավադրվում, ըստ այդմ Ձեր կանխավճարի գումարը պետք է կազմի գույքի գնահատված արժեքի նվազագույնը 70%-ը ◆ Վարկի գումարը հաշվարկվում է գնահատման ակտի համաձայն գույքի ներկայիս շուկայական արժեքի և գույքի ձեռքբերման արժեքի մեծություններից նվազագույնի հիման վրա:	Վարկի գումարը չի կարող գերազանցել՝ ◆ գույքի գնահատված արժեքի 50%-ը, եթե այն գտնվում է Երևանում կամ մերձակա շրջաններում ◆ գույքի գնահատված արժեքի 25%-ը, եթե այն գտնվում է ՀՀ-ի այլ վայրում

[1] Վարկառուի նվազագույն տարիքը պետք է լինի 18 տարեկան: Վարկառուի տարիքի և վարկի ժամկետի հանրագումարը չի կարող գերազանցել 65 տարին:
[2] Լրացուցիչ պայմաններ՝ ձեռքբերվող գույքը կառուցվել է 2003թ-ին կամ ավելի ուշ: Հաճախորդը հանդիսանում է Plus կամ Status և նվազագույն ամսական զուտ եկամուտը կազմում է 500 000 ՀՀ դրամ: Համավարկառուի առկայության դեպքում նվազագույն համախառն զուտ աշխատավարձը պետք է կազմի 600 000 ՀՀ դրամ: Վարկը հաստատվում է գործող ստանդարտ տոկոսադրույքով: Վարկառուի բոլոր վարկերի գծով ամսական վճարումների հարաբերակցությունը զուտ ամսական եկամտին չի կարող գերազանցել 50%ը: Վարկի գումարը չի կարող գերազանցել 100 միլիոն ՀՀ դրամը:
[3] 75%-90% վարկ-գրավ հարաբերակցության դեպքում վարկի գումարը չի կարող գերազանցել 100 միլիոն ՀՀ դրամը:

ԱՄՆ դոլարով վարկեր

	Ձեռքբերման վարկ	Վերանորոգման վարկ
Գումար	10 000 - 400 000 ԱՄՆ դոլար	6 000 - 70 000 ԱՄՆ դոլար
Ժամկետ[1]	24 - 240 ամիս[2]	24 - 120 ամիս
Վարկ-եկամուտ հարաբերակցություն	◆ Եթե վարկառուի եկամուտն ամբողջությամբ ԱՄՆ դոլարով է, ապա վարկառուի բոլոր վարկերի գծով ամսական վճարումների հարաբերակցությունը զուտ ամսական եկամտին չի կարող գերազանցել ◆ 60%-ը՝ անկախ Հաճախորդի եկամտի չափից: Եթե վարկառուի եկամտի 50%-ից ավելին ԱՄՆ դոլարով է, ապա վարկառուի բոլոր վարկերի գծով ամսական վճարումների հարաբերակցությունը զուտ ամսական եկամտին չի կարող գերազանցել. ◆ 40%, եթե զուտ ամսական եկամուտը չի գերազանցում 350 000 ՀՀ դրամը ◆ 50%, եթե զուտ ամսական եկամուտը 350 000 ՀՀ դրամ է և ավելին ◆ Եթե վարկառուի եկամտի 50%-ից պակասն է ԱՄՆ դոլարով, ապա վարկի ամսական մարումների առավելագույն գումարը չի կարող լինել ավելին քան ԱՄՆ դոլարով ստացված եկամուտը: Ընդ որում, վարկառուի բոլոր վարկերի գծով ամսական վճարումների հարաբերակցությունը զուտ ամսական եկամտին չի կարող գերազանցել. ◆ 40%, եթե զուտ ամսական եկամուտը չի գերազանցում 350 000 ՀՀ դրամը ◆ 50%, եթե զուտ ամսական եկամուտը 350 000 ՀՀ դրամ է և ավելին:	
Վարկ-գրավ հարաբերակցություն	Վարկի գումարը չի կարող գերազանցել. ◆ ձեռքբերվող գույքի գնահատված արժեքի 85%-ը, եթե այն գտնվում է Երևանում և գրավադրվում է ՀՀ-ում գտնվող լրացուցիչ անշարժ գույք, պայմանով, որ ձեռքբերվող և լրացուցիչ գույքի վարկ-գրավ հարաբերակցությունը միասին չի գերազանցում 70%-ը: Որպես լրացուցիչ գրավ Բանկը ընդունում է միայն մեկ գույք[3], ըստ այդմ Ձեր կանխավճարի գումարը պետք է կազմի գույքի գնահատված արժեքի նվազագույնը 15%-ը ◆ ձեռքբերվող գույքի գնահատված արժեքի 70%-ը, եթե այն գտնվում է Երևանում, և լրացուցիչ գույք չի գրավադրվում, ըստ այդմ Ձեր կանխավճարի գումարը պետք է կազմի գույքի գնահատված արժեքի նվազագույնը 30%-ը ◆ ձեռքբերվող գույքի գնահատված արժեքի 50%-ը, եթե այն գտնվում է ՀՀ-ի որևէ այլ վայրում, և գրավադրվում է ՀՀ-ում գտնվող լրացուցիչ անշարժ գույք, ըստ այդմ Ձեր կանխավճարի գումարը պետք է կազմի գույքի գնահատված արժեքի նվազագույնը 50%-ը ◆ ձեռքբերվող գույքի գնահատված արժեքի 30%-ը, եթե այն գտնվում է ՀՀ-ի որևէ այլ վայրում, և որևէ լրացուցիչ գույք չի գրավադրվում, ըստ այդմ Ձեր կանխավճարի գումարը պետք է կազմի գույքի գնահատված արժեքի նվազագույնը 70%-ը: ◆ Վարկի գումարը հաշվարկվում է գնահատման ակտի համաձայն գույքի ներկայիս շուկայական արժեքի և գույքի ձեռքբերման արժեքի մեծություններից նվազագույնի հիման վրա:	Վարկի գումարը չի կարող գերազանցել. ◆ գույքի գնահատված արժեքի 50%-ը, եթե այն գտնվում է Երևանում կամ մերձակա շրջաններում ◆ գույքի գնահատված արժեքի 25%-ը, եթե այն գտնվում է ՀՀ-ի այլ վայրում

[1] *Վարկառուի նվազագույն տարիքը պետք է լինի 18 տարեկան: Վարկառուի տարիքի և վարկի ժամկետի հանրագումարը չի կարող գերազանցել 65 տարին:*
[2] *181-240 ամիս վարկի ժամկետը կիրառելի է միայն, երբ վարկի առավելագույն գումարը չի գերազանցում 250 000 ԱՄՆ դոլարը:*
[3] *70%-85% վարկ-գրավ հարաբերակցության դեպքում վարկի գումարը չի կարող գերազանցել 250 000 ԱՄՆ դոլարը:*

Կարևոր տեղեկատվություն ԱՄՆ դոլարով վարկերի վերաբերյալ

ԱՄՆ դոլարով վարկը կարող է տրամադրվել միայն այն հաճախորդներին, ովքեր ունեն եկամտի աղբյուր ԱՄՆ դոլարով (ամբողջական կամ մասնակի), կամ որոնց եկամուտը ՀՀ դրամով է և սակայն ենթակա է փոփոխման ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի տատանումների դեպքում: Բանկը կարող է Ձեզանից պահանջել եկամտի աղբյուրը հավաստող լրացուցիչ փաստաթղթեր:

ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում վարկի հաշվեգրված տոկոսագումարները, հիմնական գումարի ամսական վճարների հետ միաժամանակ, կարող են վճարվել ՀՀ դրամով կամ ԱՄՆ դոլարով, համաձայն Հաճախորդի կողմից տրված գրավոր հանձնարարականի: ՀՀ դրամով վճարելու պարագայում փոխարկումն իրականացվում է մարման պահի դրությամբ Բանկի կողմից սահմանված արտարժույթի վաճառքի փոխարժեքով:

ԱՄՆ դոլարով վարկ վերցնելիս՝ Դուք պետք է հաշվի առնեք արտարժութային ռիսկը, քանի որ փոխարժեքի տատանումները կարող են ազդեցություն ունենալ Ձեր ամսական մարումների գումարի, ինչպես նաև Ձեր ԱՄՆ դոլարով վարկի՝ ՀՀ դրամով արտահայտված գումարի մեծության վրա:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում 2014թ. հունվարից մինչև 2018թ. մայիս ամիսների ընթացքում ՀՀ դրամ – ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանումների գրաֆիկը (ներկայացված է ամսական միջին փոխարժեքի հիման վրա)՝ Ձեր արտարժութային ռիսկն ավելի պատկերավոր և գնահատելի դարձնելու համար:



Ներկայացուցչական օրինակ

Հետևյալ օրինակում ներկայացված է արտարժութային վարկի ամսական մարման ՀՀ դրամով արտահայտված գումարի վրա փոխարժեքի տատանումների (ՀՀ դրամի արժևորման կամ արժեզրկման) ազդեցությունը:

Վարկի գումար՝ 50,000 ԱՄՆ դոլար
Վարկի ժամկետ՝ 180 ամիս
Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք՝ 9%
Վարկի մարման տարբերակ՝ ամսական հավասարաչափ մարումներով

Ըստ վերը նշված մանրամասների վարկի ամսական մարման գումարը կազմում է 507.13 ԱՄՆ դոլար:
1 ԱՄՆ դոլարը = 485 ՀՀ դրամ փոխարժեքի դեպքում ամսական մարման գումարը ՀՀ դրամով կկազմի՝
245,958.05 ՀՀ դրամ:

ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի 20% տատանման դեպքում, վարկի ամսական մարման գումարը ՀՀ դրամով կկազմի՝

- ՀՀ դրամի արժևորման դեպքում (1 ԱՄՆ դոլարը՝ 388 ՀՀ դրամ)՝ **196,766.44 ՀՀ դրամ**
- ՀՀ դրամի արժեզրկման դեպքում (1 ԱՄՆ դոլարը՝ 582 ՀՀ դրամ)՝ **295,149.66 ՀՀ դրամ**

Այսինքն՝ ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի 20% տատանման դեպքում վարկի ամսական մարման գումարը արտահայտված ՀՀ դրամով կփոփոխվի 49,191.61 ՀՀ դրամով:

ԱՄՆ դոլարով վարկի դիմելուց առաջ անհրաժեշտ է հնարավորինս մանրամասն կշռադատել Ձեր որոշումը, քանզի արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են էական ազդեցություն ունենալ փաստացի մարվող գումարների և Ձեր վարկային պարտավորությունների մեծության վրա:

Ապահովում և ապահովագրություն

- Անշարժ գույքը գրավադրվում է Բանկի օգտին՝ մինչև վարկի ամբողջական մարումը:
- Անշարժ գույքի ձեռքբերման վարկի դեպքում Հաճախորդը՝ այսուհետ նաև վարկառու, գրավադրվող գույքի նկատմամբ պետք է ունենա սեփականության իրավունք:
- Եթե վարկը տրամադրվում է առաջնային շուկայից գնվող անշարժ գույքի ձեռքբերման համար, և այն կառուցման փուլում է գտնվում (այսինքն դեռևս բացակայում է սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը), որպես վարկի ապահովում պետք է գրավադրվի որևէ այլ բնակելի անշարժ գույք: Սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի տրամադրումից հետո ձեռքբերված անշարժ գույքը պետք է գրավադրվի Բանկի օգտին՝ գրավադրված այլ գույքի փոխարեն: Անշարժ գույքի ձեռքբերման փաստաթղթերը (առուվաճառքի պայմանագիր, սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական և այլն) պետք է հնարավորինս շուտ տրամադրվեն Բանկին գրավադրման գործընթացը սկսելու նպատակով (ձեռքբերված անշարժ գույքն առավելագույնը 12-րդ ամսվա ավարտին պետք է գրավադրված լինի Բանկի օգտին):
- Գրավադրված անշարժ գույքը պետք է ապահովագրվի՝ օգտվելով Բանկի կողմից ընդունելի ապահովագրական ընկերությունների ծառայություններից : Ապահովագրական պոլիսը պետք է վերակնքվի յուրաքանչյուր տարի վարկային պայմանագրի գործողության ողջ ընթացքում: Եթե վարկառուն չի ապահովում գույքի ապահովագրումը, ապա Բանկն ինքնուրույն կիրականացնի ապահովագրությունը՝ վարկառուի հաշվին: Ապահովագրության սակագները և Բանկի կողմից ընդունելի ապահովագրական ընկերությունների ցանկը ներկայացված է սույն տեղեկատվական ամփոփագրի Հավելված 1-ում:
- Ապահովագրական հատուցման շահառուն վարկառուն է:
- Գույքի ապահովագրությունը կատարվում է գույքի ամբողջ արժեքի կամ վարկի գումարի չափով, ըստ վարկառուի ցանկության:
- Գույքի արժեքի մի մասի չափով ապահովագրության դեպքում ապահովագրական հատուցումը կվճարվի ապահովագրական գումարի և գույքի ամբողջական շուկայական արժեքի հարաբերակցության համամասնությամբ:
- **Գրավի պայմանագրով նախատեսված գրավի առարկայի ապահովագրության պայմանները խախտելու դեպքում Բանկն իրավունք ունի պահանջել վարկի վաղաժամկետ մարում:**
- Վերանորոգման վարկերի դեպքում, գույքը կարող է հանդիսանալ գրավի առարկա, եթե վարկառուն և/կամ վարկառուի ընտանիքի անմիջական անդամներն ունեն առնվազն 10% սեփականության մասնաբաժին գրավադրվող գույքից կամ ներկայացնում են փաստեր առ այն, որ նրանք բնակվում են այդ տանը:

Ուշադրություն. Գրավ դրված գույքը կարող է դառնալ այլ գրավի առարկա (հաջորդող գրավ):

Վարկի տրամադրում

- Վարկի դիմումը ընդունվում է Բանկի ցանկացած մասնաճյուղում:
- Հիփոթեքի և գրավի պայմանագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով: Բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը, հիփոթեքի իրավունքը և այլ գույքային իրավունքները ենթակա են պետական գրանցման (սակագների համար տես Հավելված 1-ը):
- Բանկը վարկ տրամադրելու որոշումը կայացնում է իր հայեցողությամբ՝ հաշվի առնելով վարկային հայտի համապատասխանությունը տվյալ վարկատեսակի հայտարարված պայմաններին, ինչպես նաև գնահատելով այնպիսի էական հանգամանքներ, ինչպիսիք են՝ Հաճախորդի վարկարժանությունը, ժամկետանց պարտավորությունների առկայությունը, գրավադրվող գույքի իրացվելիությունը, և այլն:
- Վարկային հայտի վերաբերյալ վերջնական որոշման կայացման և Հաճախորդին որոշման մասին տեղեկացնելու ժամկետը՝ Բանկի կողմից պահանջված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 2-5 աշխատանքային օրվա ընթացքում:
- Վարկը վարկառուին տրամադրելու ժամկետը՝ գրավի վկայականը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
- Վարկը տրամադրվում է միանվագ և անկանխիկ:
- Վարկը տրամադրվում է միայն գրավի և ապահովագրության վկայականները/ պայմանագրերը ներկայացնելուց հետո:

- Անշարժ գույքի գնահատման և գրավադրման հետ կապված ծախսերը կրում է Հաճախորդը (տես Հավելված 1):
- Վարկի հաստատման և տրամադրման համար Բանկի կողմից պահանջվող փաստաթղթերի ձեռքբերման և անհրաժեշտ գործարքների համար վճարվող ծախսերը կատարվում են Հաճախորդի կողմից:

Վարկի վճարումներ

ՀՀ դրամով վարկերի դեպքում վարկի հաշվեգրված տոկոսագումարները, հիմնական գումարի ամսական վճարների հետ միաժամանակ, վճարվում են ՀՀ դրամով:ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում վարկի հաշվեգրված տոկոսագումարները, հիմնական գումարի ամսական վճարների հետ միաժամանակ, կարող են վճարվել ՀՀ դրամով կամ ԱՄՆ դոլարով, համաձայն Հաճախորդի կողմից տրված գրավոր հանձնարարականի: Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով, մեկ տարվա համար որպես հիմք ընդունելով 365 օր օրացուցային տարին կամ 366 օր օրացուցային տարին՝ նահանջ տարվա պարագայում:

Օրինակ. Հաճախորդին տրամադրվել է ՀՀ դրամով անշարժ գույքի ձեռքբերման վարկ՝ նվազող մարումներով.

Վարկի գումար՝ 25,000,000 ՀՀ դրամ
Վարկի ժամկետ՝ 120 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք՝ 12%
Տարվա օրերի քանակ՝ 365/366
Վարկի տրամադրման ամսաթիվ՝ 01/03/2019
Առաջին մարման ամսաթիվ՝ 01/04/2019
Վարկի վերջնաժամկետ՝ 01/03/2029

Առաջին ամսվա տոկոսադրույքը գտնելու համար օգտագործվում է հետևյալ բանաձևը.

1 = R * L / 365 * 31 = 12% * 25,000,000 / 365 * 31 = 254,794.52 ՀՀ դրամ որտեղ,
1 = առաջին ամսվա տոկոսագումար
R = տարեկան անվանական տոկոսադրույք
L = վարկի մնացորդ

Վարկի մայր գումարը և տոկոսագումարները մարվում են ամսական հաճախականությամբ հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

- Վարկի հիմնական գումարը մարվում է հավասար ամսական վճարումներով, իսկ հաշվեգրված տոկոսների գումարը նվազում է հիմնական գումարի մարմանը զուգընթաց: Այսպիսով, վարկի մարման ողջ ժամանակահատվածում ընդհանուր ամսական վճարումները նվազում են:

- Վարկի հիմնական գումարը և հաշվեգրված տոկոսները մարվում են հավասարաչափ ամսական վճարումների (անուիտետային) սկզբունքով՝ վարկի մարման ողջ ժամանակահատվածի ընթացքում փոփոխվում են և՛ վարկի մայր գումարի գծով վճարումները, և՛ հաշվեգրված տոկոսների գումարները, սակայն վարկի գծով ամսական ընդհանուր վճարումների մեծությունը մնում է հաստատուն: Բանկի նկատմամբ Հաճախորդի պարտավորությունները ենթակա են մարման հետևյալ հերթականությամբ (եթե այլ համաձայնություն չի կայացվել կողմերի միջև).

ա) Վարկի տրամադրման/սպասարկման հետ կապված բոլոր վճարները/միջնորդավճարները,
բ) Հաշվեգրված տուժանքը,
գ) Հաշվեգրված տոկոսները,
դ) Վարկի հիմնական գումարը:

Կարևոր Նշումներ

- ՀՀ տարածքում վարկային հաշվի քաղվածքների առաքման վճար չի կիրառվում: ՀՀ տարածքից դուրս փոստով վարկային հաշվի քաղվածքների առաքման համար կիրառվում է ամսական 25,000 ՀՀ դրամ վճար:

- Հիփոթեքային վարկերի քաղվածքների կրկնօրինակների կամ վարկային հաշվի պատմության վերաբերյալ տեղեկանքների համար վճար չի կիրառվում:

- Եթե շուկայում անշարժ գույքի գների բացասական միտում է նկատվում՝ 20% և ավելի չափով, Բանկը կարող է պահանջել գրավադրված անշարժ գույքի լրացուցիչ գնահատում:

Պահանջվող փաստաթղթեր

- Վավեր անձնագիր, կացության քարտ կամ նույնականացման քարտ,
- Բանկում աշխատավարձային հաշիվ ունեցող հաճախորդների համար՝ տեղեկանք գործատուից, որը հաստատում է, որ Հաճախորդի աշխատավարձը կվճարվի Բանկում սպասարկվող իր բանկային հաշվին (Բանկի համար ընդունելի տարբերակին համապատասխան),
- Բանկում ոչ աշխատավարձային հաշիվ ունեցող հաճախորդների համար, եկամուտի աղբյուրները/ չափը հաստատող պաշտոնական ապացույցներ և/կամ փաստաթղթեր, օրինակ՝ հարկային հաշվետվություն, շահաբաժինների հավաստագիր, վարձակալության պայմանագիր, բանկային հաշիվների քաղվածքներ և այլն,
- Եթե դիմողը Բանկի Հաճախորդ չէ, ապա նրա բանկային հաշվի վերջին 3 ամսվա քաղվածքները՝ աշխատավարձային փոխանցումներով (աշխատավարձային հաճախորդներ), հաշիվների վերջին 3 ամիսների միջին մնացորդը հաստատող քաղվածքներ (ոչ աշխատավարձային հաճախորդներ), եկամուտը հավաստող պաշտոնական փաստաթղթեր,
- Վերը նշված փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել նաև համավարկառուների և երաշխավորների համար (առկայության դեպքում),
- Անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը (բնօրինակը վերադարձվում է Հաճախորդին/ սեփականատիրոջը վարկի տրամադրումից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում), անշարժ գույքի սեփականության իրավունքը հաստատող բավարար հիմքերը՝ փաստաթղթերի պատճենները (օրինակ՝ ժառանգության իրավունքի վկայագիր, առուվաճառքի պայմանագիր, որոշում, վճիռ, մահվան վկայական, լիազորագիր և այլն), սեփականատերերի/ համասեփականատերերի անձնագրերի պատճենները,
- Անհրաժեշտության դեպքում Բանկը կարող է պահանջել ներկայացնել տեղեկանք անձնագրային բաժնից բնակելի անշարժ գույքի հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ,
- Անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը: Գնահատումը պետք է իրականացվի Բանկի կողմից ընդունելի անկախ գնահատող կազմակերպության կողմից: Անշարժ գույքի գնահատման հետ կապված սակագները և Բանկի կողմից ընդունելի գնահատող ընկերությունների ցանկը ներկայացված է սույն տեղեկատվական ամփոփագրի Հավելված 1-ում:
- Միասնական տեղեկանք անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումից բնակելի անշարժ գույքի առկա սահմանափակումների վերաբերյալ (տրամադրել բնօրինակը),
- Այլ փաստաթղթեր, որոնք կարող են պահանջվել վարկավորման գործընթացի ժամանակ:

Հավելված 1

Անշարժ գույքի գնահատման և գրավադրման հետ կապված ծախսեր

Վճարի տեսակը	Վճարի չափը
Գույքի գնահատման վճար	15,000 - 90,000 ՀՀ դրամ
Գրավի իրավունքի պետական գրանցման պետական տուրք և վճար	26,500 ՀՀ դրամ
Նոտարական ծառայության վճար (ներառյալ նոտարական վավերացման պետական տուրքը)	
Միայն գրավի պայմանագրի դեպքում	15,000 ՀՀ դրամ
Գրավի և առուվաճառքի պայմանագրի դեպքում	20,000 ՀՀ դրամ
Պետ. Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրվող տեղեկանք գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ	10,500 ՀՀ դրամ
Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վճար	45,000 ՀՀ դրամ
Անշարժ գույքի ապահովագրության արժեք	Գույքի գնահատված արժեքի 0.16-0.18%
Անշարժ գույքի ձեռքբերման վարկի տրամադրման միանվագ վճար	Վարկի գումարի 1% (0,5% Plus և Status հաճախորդների համար), առավելագույնը 200,000 ՀՀ դրամ
Անշարժ գույքի վերանորոգման վարկի տրամադրման միանվագ վճար	Վարկի գումարի 1% (0,5% Plus և Status հաճախորդների համար), առավելագույնը 100,000 ՀՀ դրամ
Վարկի սպասարկման վճար	Վարկի ամսական կամ տարեկան սպասարկման վճար չի կիրառվում

Բանկի կողմից ընդունելի ապահովագրական ընկերությունների ցանկ

«Արմենիա Ինշուրանս» ՍՊԸ	+374 (11) 56 04 04	Հյուսիսային պողոտա 10, տարածք 1, Երևան
«Ինգո Արմենիա» ԱՓԲԸ	+374 (10) 59 21 21	Հանրապետության 51, 53, տարածք 47, 48, 50, Երևան
«Նաիրի Ինշուրանս» ՍՊԸ	+374 (10) 53 94 57 +374 (10) 53 94 58	Պուշկինի 50, բնակարան 1, Երևան
«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ	+374 (60) 27 57 57	Կոմիտասի պողոտա 62, տարածք 93-93/1, Երևան
«Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ	+374 (10) 59 10 10 +374 (10) 50 07 70	Հյուսիսային պողոտա 1, Երևան
«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ	+374 (10) 53 52 90	Տիգրան Մեծ 39, Երևան

Բանկի կողմից ընդունելի անշարժ գույքի անկախ գնահատողների ցանկ

«ԱԳ Բորսա» ՍՊԸ	+374 (10) 25 27 89 +374 (10) 25 90 31 +374 (10) 25 22 30 +374 (10) 25 27 86	agborsa@mail.ru	Նաիրի Զարյան փողոց, 22, Երևան
«ՎԻ ԷՄ-ԱՐ ՓԻ» ՍՊԸ	+374 (10) 58 87 97 +374 (99) 58 87 97	vm-rp@mail.ru	Վարդանանց փողոց, փակուղի 8, շենք 3-226, Երևան
«ԱՄԻՆՏԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	+374 (10) 43 22 76 +374 (98) 80 04 24 +374 (93) 50 02 01	amintasgroup@mail.ru	Արցախի փողոց 23/6, Տուն Դեպո կոմպլեքս, Երևան
«Ար Վի Էմ Քոնսալտ» ՍՊԸ	+374 (10) 54 64 90 +374 (98) 94 44 49 +374 (93) 94 44 49	info@rvmconsult.am	«Սախարով» Բիզնես կենտրոն, Նալբանդյան փողոց 48/1, Երևան

Թողարկված է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հանդիսանում է
Էյչ-Էս-Բի-Սի Խմբի անդամ, որն աշխարհի ֆինանսական
և բանկային ծառայություններ տրամադրող խոշորագույն
կազմակերպություններից մեկն է: Էյչ-Էս-Բի-Սի Խմբի
միջազգային ցանցը սպասարկում է ավելի քան 40 միլիոն հաճախորդ
ավելի քան 64 երկրում և տարածաշրջանում:
www.hsbc.am
+374 60 655 000

Իրավաբանորեն հաստատված է
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Տերյան փողոց 66
Գրանցման համար 67

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

© «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, 2020:
Բոլոր իրավունքները պահպանված են

Ուժի մեջ է սկսած 28 հոկտեմբեր, 2020թ.-ից